ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » հունիսի 2013թ. N -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Դ. ՕՀԱՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Դավիթ Օհանյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Դ. ՕՀԱՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանուն առաջարկվում է Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակել Դավիթ Օհանյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Դ. ՕՀԱՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Դ. Օհանյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Դ. ՕՀԱՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Դ. Օհանյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՆԱՍԱՐԻ ՕՀԱՆՅԱՆ

Ծնվել է 1965թ. հունվարի 29-ին Երևանում։
1972-1982թթ. սովորել է Հովի. Հովհաննիսյանի անվան թիվ 52 միջնակարգ դպրոցում։
Աշխատանքային գործունեությունը սկսել է 1983թ. Հայէլեկտրագործարանում որպես փականագործի աշակերտ։ Նույն թվականին զորակոչվել է ԽՍՀՄ զինված ուժեր։
1985թ. ծառայությունն ավարտելուց հետո աշխատանքի է անցել նույն գործարանում՝ որպես ֆրեզերագործի աշակերտ / ստացել է 2-րդ, 3-րդ և 4-րդ կարգ/։
1985թ. ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ, որն ավարտել է 1990թ. և ստացել տնտեսագետի որակավորում։
1990 թվականից աշխատել է Մաշտոցի շրջանի հասարակական սննդի առևտրա-արտադրական թիվ 9 միավորումում որպես ապրանքագետ, իսկ 1994 թվից մինչև 1996թ.՝ որպես նույն ձեռնարկության փոխտնօրեն։
1997թ. հունվարի 31-ից մինչև 2008թ. հուլիսի 2-ը աշխատել է Մալաթիա – Սեբաստիա թաղապետարանի առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի պետ։ 2008թ. հուլիսի 3-ից ստանձնել է Մալաթիա – Սեբաստիա համայնքի ղեկավարի պարտականությունները, իսկ 2009թ. հունիսի 15-ին, Երևանի քաղաքապետի որոշմամբ նշանակվել է Երևան քաղաքի Մալաթիա – Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար։
Մասնակցել է «Առևտրի և ծառայությունների մասին», «Տեղական տուրքերի և վճարումների մասին» ՀՀ օրենքների նախագծերի կազմման աշխատանքներին։
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիայի նախագահության պատվավոր անդամ է։
2010թ. հայրենանպաստ գործունեության համար պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն» հուշամեդալով։
2011թ. ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում «Համայնքների ֆինանսական աջակցության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով պաշտպանել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան։
2011թ.՝ Տեղական ինքնակառավարման 15-ամյակին, պարգևատրվել է ՀՀ ԱԺ «Պատվո մեդալով»։
2013թ. ՀՀ ՊՆ-ի հրամանով պարգևատրվել է «Վազգեն Սարգսյան» մեդալով։
1998 թվականից Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ է, Մալաթիա–Սեբաստիա տարածքային կազմակերպության նախագահը։
Ամուսնացած է, ունի երկու որդի։